ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԵՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնք
ՀՀ, Սյունիքի մարզ, գ.Տեղ, 0284-96-2-20, tegh101@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

17 ԱՊՐԻԼԻ 2025ԹՎԱԿԱՆԻ N 080-Ա

ՆԱԽԱԳԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ (ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՀԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ) ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, «Քաղաքաշինության մասին» օրենքի 22.1 հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596 հաստատված կարգի 9-րդ կետով, հիմք ընդունելով «Պետական գույքի կառավարման կոմիտե» ՊՄ-ի 2025 թվականի ապրիլի 09-ի հայտը, **որոշում եմ.**

1. «Պետական գույքի կառավարման կոմիտե» ՊՄ-ին տալ նախագծման թույլտվություն (ճարտարապետահատակագծային առաջադրանք)՝ Տեղ համայնքի Խնածախ բնակավայրի 10-րդ փ., թիվ 1 հասցեում 200 աշակերտի և 40 մանկապարտեզի երեխայի համար կրթահամալիրի կառուցման աշխատանքների համար:

2. «Պետական գույքի կառավարման կոմիտե» ՊՄ-ն պարտավոր է նախագծային փաստաթղթերը ներկայացնել համաձայնեցման և ստանալ շինարարության թույլտվություն:

3. Աշխատակազմի քարտուղարի պարտականությունները կատարողին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Դ. ՂՈՒԼՈՒՆՑ**

2025թ. ապրիլի 17
գ.Տեղ